

Կազմակերպությունների գործունեության ֆինանսական վերլուծության
ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն ուղեցույցը նպատակ ունի օժանդակել հաշվապահների որակավորման քննությունների հայտատուներին (մասնակիցներին)՝ քննության ժամանակ առաջադրվող վերլուծական խնդիրները լուծելիս:

Ուղեցույցում բերված գործակիցների սահմանային մեծությունները խիստ հարաբերական են և տարբեր ճյուղերում, կազմակերպություններում ու կոնկրետ հրավիճակներում կարող են ունենալ օպտիմալ մեծություններ:

Կազմակերպությունների գործունեության ֆինանսական վերլուծություն

Կազմակերպությունների գործունեության ֆինանսական վերլուծությունը հիմնականում բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- 1. Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն,**
- 2. Կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծություն,**
- 3. Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծություն:**

Ֆինանսական վերլուծության ժամանակ կիրառվող մեթոդներից են համեմատման մեթոդը (միջին ճյուղային, նախորդ ժամանակաշրջանների, պլանային ցուցանիշների հետ), շեղումների գործոնային վերլուծությունը, հաշվեկշռային մեթոդը, տնտեսամաթեմատիկական այլ մեթոդներ:

Ֆինանսական վերլուծության ժամանակ տեղեկատվության հիմնական աղբյուր են հանդիսանում հաշվապահական հաշվառման տվյալները, այդ իսկ պատճառով խիստ կարևոր է հաշվի առնել հաշվապահական գնահատումների, ինչպես նաև հնարավոր այլընտրանքային մոտեցումների կիրառման գործոնը: Օրինակ՝ պաշարներում մնացող միավորների ընտրության տարբեր բանաձևերերի (FIFO, LIFO կամ միջին կշռված արժեքի), ամորտիզացվող ակտիվների մաշվածության հաշվարկման տարբեր մոդելների, կամ էական սխալների ուղղման գումարի արտացոլման հիմնական (նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում) կամ հնարավոր այլընտրանքային (այդ գումարի ներառումը ընթացիկ ժամանակաշրջանի գուտ շահույթում կամ վնասում) մոտեցումների կիրառումը կարող է հանգեցնել էական տարբերությունների:

1. Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն

Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծությունը ներառում է հետևյալ 3 ուղղությունները՝

1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության ընդհանուր գնահատականը,
2. Ֆինանսական կայունության վերլուծություն,
3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն:

Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության առաջին քայլը վերլուծական հաշվեկշռի կազմումն է: Այստեղ ակտիվները դասակարգված են իրացվելիության աճման կարգով, իսկ պասիվները՝ մարման առաջնահերթության հետընթաց կարգով:

	Բանաձև (Ձև 1 հաշվետվություն)
<u>1. Ակտիվներ</u>	Հաշվեկշիռ-Տող 230
<u>1.1. Ոչ ընթացիկ ակտիվներ</u>	Ակտիվների I բաժնի հանրագումարը՝ Տող 080
<u>1.2. Ընթացիկ ակտիվներ</u>	Ակտիվների II բաժնի հանրագումարը՝ Տող 220
1.2.1. Պաշարներ	Ակտիվների II բաժնի 090, 100, 110, 120, 130, 140 տողերի հանրագումարը
1.2.2. Դեբիտորական պարտքեր	Ակտիվների II բաժնի 150, 160, 170, 180, 210 տողերի հանրագումարը
1.2.3. Դրամական միջոցներ և ընթացիկ ֆինանսական ներդրումներ	Ակտիվների II բաժնի 190, 200 տողերի հանրագումարը
<u>2. Պասիվներ</u>	Հաշվեկշիռ-Տող 500
<u>2.1. Սեփական Կապիտալ</u>	Պասիվների III բաժնի հանրագումարը՝ Տող 300
<u>2.2. Փոխառու կապիտալ</u>	Պասիվների IV և V բաժինների հանրագումարը՝ Տող 360+Տող 490
2.2.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ	Պասիվների IV բաժնի հանրագումարը՝ Տող 360
2.2.2. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	Պասիվների V բաժնի 370, 380 տողերի հանրագումարը
2.2.3. Կրեդիտորական պարտք	Պասիվների V բաժնի 490 տողից հանած 370, 380 տողերի հանրագումարը

1.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության ընդհանուր գնահատականը

Այս փուլում ուսումնասիրվում են վերլուծական հաշվեկշռի հոդվածների բացարձակ արժեքների, ինչպես նաև հաշվեկշռի հանրագումարում դրանց տեսակարար կշռի դինամիկան, բացահայտվում են փոփոխությունների միտումները և պատճառները: Վերլուծվող ցուցանիշները բաժանվում են 3 խմբերի՝

1. Հաշվեկշռի կառուցվածքը բնութագրող ցուցանիշներ,
2. Հաշվեկշռի դինամիկան բնութագրող ցուցանիշներ,

3. Հաշվեկշռի կառուցվածքային դինամիկան բնութագրող ցուցանիշներ:

1.2.Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

1. Ֆինանսական անկախության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q_1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}}$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5: Այս ցուցանիշի ցածր մակարդակը որպես կանոն ցույց է տալիս, որ կազմակերպությունն իր գործունեությունը մեծապես ֆինանսավորում է փոխառու կապիտալի հաշվին: Սակայն ընդունելի է նաև այս գործակցի համեմատաբար ցածր մակարդակը, եթե այն ուղեկցվում է միջոցների բավականաչափ բարձր շրջանառելիությամբ:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից: Այն իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q_2 = \frac{\text{Փոխառու կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. Ինքնավարության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Q_3 = \frac{\text{Սեփական կապիտալ} + \text{Ոչ ընթացիկ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}}$$

Այս գործակիցն ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ կազմակերպությունն իր միջոցները ֆինանսավորում է կարճաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին:

4. Գործող կապիտալ: Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և ոչ ընթացիկ պարտավորություններով, կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը :

$$Q_4 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ} - \text{Ընթացիկ պարտավորություններ} , \text{ կամ} \text{Սեփական կապիտալ} + \text{Ոչ ընթացիկ պարտավորություններ} - \text{Ոչ ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}}$$

5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հաշվին:

$$Q_5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}}$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հաշվին:

$$Q_6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}}$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5: Այս ցուցանիշի հմաստը կայանում է նրանում, որ պաշարները, որոնք կազմակերպության ընթացիկ ակտիվների առավել ոչ իրացվելի մասն են, պետք է գոնե կիսով չափ ապահովված լինեն գործող կապիտալով:

7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$Q_7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

8. Գույքի ռեալ արժեքի գործակից: Այս գործակիցը ցույց է տալիս, թե կազմակերպության

ընդհանուր միջոցներում որքան մաս են կազմում արտադրության միջոցները: Այն որոշվում է կազմակերպության արտադրության միջոցների (հիմնական միջոցներ, պաշարներ) և հաշվեկշռի հանրագումարի հարաբերությամբ:

$$Q_8 = \frac{\text{Ռեալ ակտիվներ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}}$$

Այս ցուցանիշի ընդունելի փոքրագույն արժեքը կազմում է 0.5: Այն բնութագրում է կազմակերպության արտադրական պոտենցիալը, արտադրության միջոցներով ապահովվածության աստիճանը:

1.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

Իրացվելիության ցուցանիշներն առավել կարևոր են արտաքին վերլուծողների, հատկապես վարկատու կազմակերպությունների համար: Իրացվելիության ցուցանիշները ցույց են տալիս կազմակերպության ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը: Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

1. Ընթացիկ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս կազմակերպության ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերությամբ՝

$$Q_9 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}}$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

2. Արագ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների՝ առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, դրանց համարժեքներ, ընթացիկ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտքեր) և ընթացիկ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q_{10} = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}}$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:

3. Բացարձակ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների՝ դրամական միջոցներով ապահովվածության աստիճանը և որոշվում է դրամական

միջոցների ու դրանց համարժեքների և ընթացիկ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q_{11} = \frac{\text{Դրամական միջոցներ + դրամական միջոցների համարժեքներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}}$$

Այս գործակցի ցանկալի արժեքը ընկած է (0.2; 0.5) թվերի սահմաններում: Գործակցի չափից դուրս բարձր մակարդակը նույնպես ցանկալի չէ, քանի որ այն վկայում է դրամական միջոցների անգործության մասին:

2. Կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծություն

Կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծության ժամանակ գնահատվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շահույթի ցուցանիշների դինամիկան: Հաշվարկվում են ցուցանիշների շեղումները և բացահայտվում դրանց վրա ազդող գործոնները:

Զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը (Ձև 2 հաշվետվության տող 160) հետևյալ մեծությունների հանրագումարն է՝

$$C = C_{\text{իրացում}} + C_{\text{այլ գործառն.}} + C_{\text{ոչ գործառն.}} + C_{\text{արտասովոր, որտեղ}}$$

C -ը հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթն է մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը ;

$C_{\text{իրացում}}$ -ը արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթն է ;

$C_{\text{այլ գործառն.}}$ -ը գործառնական այլ եկամուտների և գործառնական այլ ծախսերի տարբերությունն է;

$C_{\text{ոչ գործառն.}}$ -ը ոչ գործառնական գործունեության արդյունքն է՝ շահույթ կամ վնաս ;

$C_{\text{արտասովոր}}$ -ը արտասովոր դեպքերից շահույթն է կամ վնասը :

Շահույթի ցուցանիշների գործոնային վերլուծության ժամանակ իրացումից շահույթը պետք է վերլուծել ըստ մի շարք գործոնների ազդեցության չափերի, իսկ շահույթի մնացած ցուցանիշների վերլուծության դեպքում անհրաժեշտ է միայն վերլուծել այդ ցուցանիշների բացարձակ արժեքների, ինչպես նաև շահույթի մեջ դրանց տեսակարար կշռի դինամիկան (եթե դրանց տեսակարար կշիռը նշանակալի չէ): Իրացումից շահույթի վրա ազդող գործոններն են՝

1. Իրացման գների փոփոխությունը;

2. Իրացված արտադրանքի (ապրանքների) քանակի փոփոխությունը;
3. Արտադրված և իրացված արտադրանքի կազմում կառուցվածքային տեղաշարժերը;
4. Միավոր արտադրանքի ինքնարժեքի փոփոխությունը;
5. Իրացման (առևտրային) ծախսերի փոփոխությունը;
6. Վարչական և ընդհանուր այլ ծախսերի փոփոխությունը:

Իրացումից շահույթի գործոնային վերլուծության համար անհրաժեշտ տվյալները, որպես կանոն, հասանելի են միայն ներքին վերլուծողին:

Կարևոր է նաև Շահութաբերության շեմի և Ֆինանսական կայունության պաշարի որոշումը: Նման կարգի վերլուծություն կարող է իրականացվել նաև կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության ժամանակ: Այս խնդիրներն առավել ամբողջական կարող են լուծվել միայն ներքին վերլուծողի կողմից, սակայն արտաքին վերլուծողը ևս, հիմնվելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (Ձև 2) տվյալների վրա, կարող է կատարել խիստ կարևոր եզրահանգումներ: Այս վերլուծության հիմքը ծախսերի բաժանումն է փոփոխուն և հաստատուն ծախսերի ու դրա հիման վրա ինքնաձախսաձածկման կետի կամ, որ նույնն է, շահութաբերության սահմանի որոշումը և համադրումը ցուցանիշների փաստացի մակարդակների հետ:

Տող N	Ցուցանիշներ	Դրանց որոշման բանաձևը
1.	Իրացումից հասույթ	Ձև 2 հաշվետվության տող 010
2.	Փոփոխուն ծախսեր	Ձև 2 հաշվետվության տող 020
3.	Համախառն շահույթ	Տող1-Տող2
4.	Սահմանային շահութաբերություն	Տող3/Տող1
5.	Հաստատուն ծախսեր	Ձև 2 հաշվետվության տող 040 + տող 050
6.	Արտադրանքի իրացումից շահույթ	Տող3-Տող5
7.	Շահութաբերության շեմ	Տող 5/Տող4
8.	Ֆինանսական կայունության պաշար	Տող1-Տող7

Շահութաբերության շեմը իրենից ներկայացնում է ինքնաձախսաձածկման կետը, այսինքն՝ իրացման այն ծավալը, որի դեպքում ձեռնարկության համախառն շահույթը հավասարվում է հաստատուն ծախսերին: Իսկ ֆինանսական կայունության պաշարը՝ այն լրացուցիչ իրացման ծավալն է, որի դեպքում կազմակերպությունը արդեն փոխհատուցում է իր հաստատուն ծախսերը և իրացման ամեն հաջորդ միավորի դիմաց ստանում է Սահմանային շահույթին հավասար շահույթ:

Այստեղ որոշակի տարածայնություններ կարող են առաջանալ հաստատուն և փոփոխուն ծախսերի որոշման ժամանակ: Առաջարկված մոտեցման համաձայն, Իրացման (առևտրային) ծախսերը (Ձև 2 հաշվետվության տող 040) և Վարչական և ընդհանուր այլ ծախսերը (Ձև 2 հաշվետվության տող 050) դիտարկվում են որպես պայմանական-հաստատուն ծախսեր, իսկ

Իրագրված արտադրանքի (ապրանքների, ծառայությունների, աշխատանքների) հնքնարժեքը (Ձև 2 հաշվետվության տող 020)՝ որպես փոփոխուն ծախսեր, սակայն այս մոտեցումը տարբեր ճյուղերում, կազմակերպություններում և կոնկրետ իրավիճակներում կարող է տարբեր լինել:

3. Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծություն

Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է կազմակերպությունը արդյունավետ օգտագործում իր միջոցները: Վերլուծության այս փուլում առանձնացվում են հետևյալ 3 խումբ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության ցուցանիշներ,
2. Շահութաբերության ցուցանիշներ,
3. Արտադրողականության ցուցանիշներ:

Վերջին խումբ ցուցանիշների հաշվարկը և վերլուծությունը, որպես կանոն, կարող են իրականացվել միայն ներքին վերլուծողի կողմից և այդ իսկ պատճառով չեն քննարկվում:

Այստեղ օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

- ա) Իրացումից հասույթ (Ձև 2 հաշվետվության տող 010);
- բ) Զուտ շահույթ մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը (Ձև 2 հաշվետվության տող 160);
- գ) Զուտ շահույթ հարկումից հետո (Ձև 2 հաշվետվության տող 180):

3.1. Կազմակերպության ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիության ցուցանիշները ցույց են տալիս, թե կազմակերպության այս կամ այն ակտիվները քանի անգամ են շրջանառվել տարվա կամ վերլուծվող ժամանակաշրջանի ընթացքում: Շրջանառելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

1. Ակտիվների շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է կազմակերպության բոլոր միջոցների շրջապտույտի արագությունը՝ անկախ դրանց ձևավորման աղբյուրից:

$$Q_{12} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Ակտիվների միջին տարեկան արժեք}}$$

2. Սեփական կապիտալի շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է կազմակերպության սեփական կապիտալի շրջապտույտի արագությունը:

Իրացումից հասույթ

$$Q_{13} = \frac{\text{Սեփական կապիտալի միջին տարեկան արժեք}}{\text{-----}}$$

Այս գործակցի չափից դուրս մեծ արժեքը ակտիվների շրջանառելիության գործակցի համեմատ վկայում է ֆինանսական անկախության գործակցի փոքրացման և ֆինանսական կայունության անկման մասին: Սեփական կապիտալի շրջանառելիության գործակցի գործոնային վերլուծության համար օգտվում են հետևյալ բանաձևից՝

$$Q_{13} = Q_{12} * 1/Q_1, \text{ որտեղ՝}$$

Q_{13} -ը Սեփական կապիտալի շրջանառելիության գործակցն է;

Q_{12} -ը Ակտիվների շրջանառելիության գործակցն է;

Q_1 -ը Ֆինանսական անկախության գործակցն է, իսկ $1/Q_1$ -ը՝ կապիտալի բազմապատկիչը:

3. Արտադրության միջոցների շրջանառելիության գործակց: Այն բնութագրում է ռեալ ակտիվների շրջապտույտի արագությունը:

Իրացումից հասույթ

$$Q_{14} = \frac{\text{Արտադրության միջոցների միջին տարեկան արժեք}}{\text{-----}}$$

4. Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակց: Այն բնութագրում է հիմնական միջոցների շրջանառելիության արագությունը:

Իրացումից հասույթ

$$Q_{15} = \frac{\text{Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք}}{\text{-----}}$$

Այստեղ որպես հայտարար կարող էր վերցվել նաև ընդհանուր ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը:

5. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակց: Այն բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջապտույտի արագությունը:

Իրացումից հասույթ

$$Q_{16} = \frac{\text{Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք}}{\text{-----}}$$

Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$Q_{17} = \frac{360}{Q_{16}}$$

6. Գործող կապիտալի շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է գործող կապիտալի շրջապտույտի արագությունը:

$$Q_{18} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Գործող կապիտալի միջին տարեկան արժեք}}$$

Գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը օրերով հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$Q_{19} = \frac{360}{Q_{18}}$$

7. Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է պատրաստի արտադրանքի շրջապտույտի արագությունը:

$$Q_{20} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Պատրաստի արտադրանքի միջին տարեկան արժեք}}$$

Այս գործակցի աճը վկայում է ձեռնարկության արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճի մասին: Այս գործակիցն օգտակար է հաշվարկել իրացվելիության վերլուծության ժամանակ՝ գնահատելու համար պատրաստի արտադրանքի իրացվելիության աստիճանը:

8. Ղեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է ղեբիտորական պարտքերի շրջապտույտի արագությունը:

$$Q_{21} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Ղեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք}}$$

Հաշվարկվում է նաև ղեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝

$$Q_{22} = \frac{360}{Q_{21}}$$

Այս գործակցի հաշվարկը և դրա դինամիկայի վերլուծությունը խիստ կարևոր է, քանի որ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ կազմակերպության իրացման ծավալները և շահույթը խիստ աճեն, որն էլ արտաքինից կվկայի կազմակերպության գործունեության արդյունավետության մասին, սակայն իրականում այդ աճը կարող է պայմանավորված լինել

կազմակերպության կողմից վաճառքի պայմանների բարելավմամբ (օրինակ՝ ապառիկ վաճառք), այլ ոչ գործարար ակտիվության աճով:

Այս գործակիցն օգտակար է նաև իրացվելիության վերլուծության ժամանակ՝ գնահատելու համար դեբիտորական պարտքերի որակը (իրացվելիության աստիճանը):

9. Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:

$$Q_{23} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Կրեդիտորական պարտքերի միջին տարեկան արժեք}}$$

Այս ցուցանիշի աճը վկայում է կազմակերպության կողմից պարտքերի մարման արագության աճի մասին, իսկ իջեցումը՝ ապառիկով գնումների աճի մասին:

Հաշվարկվում է նաև կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝

$$Q_{24} = \frac{360}{Q_{23}}$$

11. Պաշարների շրջանառելիության գործակից: Այն բնութագրում է պաշարների շրջանառելիության արագությունը:

$$Q_{25} = \frac{\text{Իրացումից հասույթ}}{\text{Պաշարների միջին տարեկան արժեք}}$$

Շրջանառելիության գործակիցները սահմանային արժեքներ չունեն, այստեղ կարևոր է դրանց դինամիկայի վերլուծությունը, փոփոխության տեմպերի համադրումը:

3.2. Կազմակերպության շահութաբերության վերլուծություն

Շահութաբերության ցուցանիշները ցույց են տալիս, թե որքանով է կազմակերպությունը արդյունավետ օգտագործում իր կապիտալը շահույթի ստացման նպատակով: Կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն են՝

1. Ակտիվների շահութաբերության գործակից: Այն ցույց է տալիս միավոր ակտիվների հաշվով շահույթի մեծությունը:

$$Q_{26} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ակտիվների միջին տարեկան արժեք}}$$

Այս ցուցանիշի իջեցումը վկայում է կազմակերպության ակտիվների գերկուտակման կամ

կազմակերպության արտադրանքի նկատմամբ պահանջարկի իջեցման մասին: Այս ցուցանիշը կարելի է գործոնային վերլուծության ենթարկել՝ օգտվելով հետևյալ բանաձևից՝

$$Q_{26} = Q_{28} * Q_{12}, \text{ որտեղ}$$

Q_{26} -ը Ակտիվների շահութաբերության գործակիցն է,

Q_{28} -ը Իրացման շահութաբերության գործակիցն է,

Q_{12} -ը Ակտիվների շրջանառելիության գործակիցն է:

2. Սեփական կապիտալի շահութաբերության գործակից: Այն ցույց է տալիս սեփական կապիտալի միավորի հաշվով շահույթի մեծությունը:

$$Q_{27} = \frac{\text{Ջուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Սեփական կապիտալի միջին տարեկան արժեք}}$$

Այս ցուցանիշի դինամիկան ազդում է կազմակերպության արժեթղթերի կուրսի վրա ֆոնդային բորսայում: Այս ցուցանիշը կարելի է գործոնային վերլուծության ենթարկել՝ օգտվելով հետևյալ բանաձևից՝

$$Q_{27} = Q_{28} * Q_{12} * 1/Q_1, \text{ որտեղ}$$

Q_{27} -ը Սեփական կապիտալի շահութաբերությունն է;

Q_{28} -ը Իրացման շահութաբերությունն է;

Q_{12} -ը Ակտիվների շրջանառելիությունն է;

Q_1 -ը Ֆինանսական անկախության գործակիցն է, $1/Q_1$ -ը՝ կապիտալի բազմապատկիչը:

Այս բանաձևը կիրառվում է նաև Արևմուտքում և հայտնի է Ղյուպոնի բանաձև անվանմամբ:

3. Իրացման շահութաբերության գործակից: Այն ցույց է տալիս իրացումից հասույթի միավորի հաշվով ստացված շահույթի մեծությունը:

$$Q_{28} = \frac{\text{Իրացումից շահույթ}}{\text{Իրացումից հասույթ}}$$

Այս գործակցի իջեցումը հետևանք է կամ իրացվող արտադրանքի գների աճի՝ արտադրանքի միևնույն ինքնարժեքի պայմաններում, կամ էլ արտադրանքի ինքնարժեքի իջեցման՝ իրացվող արտադրանքի միևնույն գների պայմաններում:

4. Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից: Այն ցույց է տալիս ընթացիկ

ակտիվների միավորի հաշվով ստացված շահույթի մեծությունը:

$$Q_{29} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք}}$$

Շահութաբերության ցուցանիշների հաշվարկի ժամանակ նույնպես խիստ կարևոր է դրանց փոփոխության դինամիկայի ուսումնասիրությունը, որի շնորհիվ կարելի է բացահայտել կազմակերպության գործունեության դրական և բացասական կողմերը: